

Աննա Ա. Վարդանյան
տնտեսագիտության թեկնածու
Թեհմինե Ռ. Մարտոյան
պատմական գիտությունների թեկնածու

ՃԱՊՈՆԱԿԱՆ ՆԱՎԻ ՀԵՏԱԳԾՈՎ. ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀՈՒՅՆԵՐԻ ՓՐԿՈՒՂԻՆ՝

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, հույների ցեղասպանություն, տարագրություն, ճապոնական նավ, փրկություն, մարդասիրություն, Զմյուռնիա, Հունաստան:

Հետազոտության նպատակը ճապոնական նավի օրինակով Զմյուռնիայի հայ և հույն տարագիրների փրկության գործընթացի ամբողջական ներկայացումն է: Ուսումնասիրվել են Զմյուռնիայի հրկիզման, տեղի քրիստոնեաբնակ թաղամասերի հայ և հույն բնակչության բնաջնջման պատմությունը, բացահայտվել են ճապոնական նավի ժամանման, վերապրողներին հունական ափ հասցնելու մանրամասները՝ համաձայն ականատես-վերապրողների ստուգապատում տեղեկությունների:

«Հերոստրատոսի փանդ», թե՛ մարդասիրություն

Ինչ է «փրկությունը», ինչո՞ւ է անհրաժեշտ փրկել, հանուն ինչի, ինչի՞ց և ինչպե՞ս փրկել, փրկել հերոսանալու և պատմության մեջ մնալու համար, թե՛ փրկել անշահախնդրորեն, մարդասիրաբար: Հարևան հարցերը և առհասարակ «փրկության» հիմնախնդիրն առանձնանում ու կարևորվում է ցեղասպանությունների, զանգվածային կոտորածների և ընդհանրապես մարդկության դեմ ուղղված հանցագործությունների ուսումնասիրության համատեքստում:

Գիտական հարթությունում «փրկության» խնդիրը Հայոց ցեղասպանության ուսումնասիրության տեսանկյունից դիտարկելու պարագայում, ըստ ազգագրագետ Հարություն Մարտոյանի, առաջնահերթ պետք է համարվի երևույթի հստակեցումը և, համաձայն դրա՝ առաջարկվում է կիրառել համեմատության մեթոդաբանությունը²: Հրեից հոլոքոստի տարիներին եվրոպական իրականության մեջ մեծ թվով շարքային քաղաքացիներ, շատ հաճախ վտանգելով իրենց կամ հարազատների կյանքը,

1 Հողվածը ստացվել է 09.10.2020 և ընդունվել է տպագրության՝ 30.10.2020:

2 Հարություն Մարտոյան, «Թուրքերի կողմից հայերի փրկության խնդիրը Յեղասպանության տարիներին Հոլոքոստի ուսումնասիրության լույսի ներքո», *Հայոց ցեղասպանություն-100. Ճանաչումից՝ հատուցում, Միջազգային գիտաժողովի զեկուցումների դրույթներ* (Երևան, Գիտություն, 2015), 218-221: Հարցի շուրջ մանրամասն տե՛ս նաև. Հարություն Մարտոյան, «Հայոց ցեղասպանության տարիներին հայերի իրական և կեղծ փրկության խնդրի շուրջ», *Լրաբեր հասարակական գիտությունների*, no. 2 (2018), 30-60:

փրկում էին հրեաների: Հետագայում հրեա ժողովուրդն իրեն փրկած օտարազգի երախտավորների ընդարձակ անվանացանկն է կազմել՝ «Երախտավորները ժողովուրդների/մարդկանց մեջ» (“The Righteous Among the Nations”)³:

Պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը, կիրառելով «միջամտություն» բառեզրը, անդրադառնում է փրկության շարժառիթներին՝ դրանք առավել խնդրահարույց ոլորտ համարելով: Հովհաննիսյանն առանձնացնում է միջամտության հետևյալ հիմնական շարժառիթները՝ սեռական, տնտեսական, կրոնական, մարդասիրական⁴: Պրոֆեսորը համոզմունք է հայտնում, որ երբեմն հենց պարզ ու հասարակ մարդիկ են ապրումակցում, կարեկցանք և բարեպաշտություն դրսևորում⁵:

Ըստ մշակութաբան, ցեղասպանագետ Հասմիկ Գրիգորյանի՝ երևույթը բավական բարդ բացատրելի է, և այն հասկանալու համար անհրաժեշտ է դիտարկել, թե ինչ հանգամանքներով է պայմանավորված «փրկողի» նման վարքը: Խնդրի ուսումնասիրության համար հեղինակը կարևոր է համարում երկու հիմնական հարցադրում՝ ովքեր են «փրկողները» և ինչ նպատակներով են «փրկում»⁶:

Ամփոփելով նշենք, որ հողվածի շրջանակում կատարված հետազոտության մեջ «փրկություն» բառեզրը կիրառվում է՝ իր մեջ ունենալով բացառապես մարդասիրության և այլասիրության գաղափարները: Այս համատեքստում «փրկություն»-ը կարելի է սահմանել հետևյալ կերպ՝ «մարդը հանուն մարդու»՝ առանց ազգային, կրոնական, սեռական կամ որևէ այլ խտրության:

1922 թ. սեպտեմբերին Չմյուռնիայի քրիստոնեաբնակ թաղամասերի բնակչության (հայ և հույն) բնաջնջումը, ապա քաղաքի հրկիզումը թուրքական իշխանությունների ցեղասպան քաղաքականության շարունակությունն էին⁷: Ազգային փոքրամասնություններին (քրիստոնյա) Թուրքիայից արտաքսելու Մուստաֆա Բենալի քա-

3 Հարություն Մարության, «Հայոց ցեղասպանության և Հրեաների հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները», *Պատմաբանասիրական հանդես* 187 no. 2 (2011), 29; <http://www.yadvashem.org/yv/en/righteous/about.asp>, դիտվել է՝ 25.08.2020:

4 Richard Hovannisian, “Intervention and Shades of Altruism during the Armenian Genocide,” *The Armenian Genocide, History, Politics, Ethics*, ed. Richard Hovannisian (New York: St. Martin’s Press, 1992), 179.

5 Նույն տեղում:

6 Հասմիկ Գրիգորյան, *Քանգվածները և քանգվածային բռնությունները. Օսմանյան կայսրության մուսուլման բնակչության մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը* (Երևան, Գիտություն, 2017), 175:

7 Մանրամասն տե՛ս Թեմիսին Մարտոյան, «Չմյուռնիայի հայ և հույն բնակչության բնաջնջման սպառնալիքի ժխտման հետևանքները (1922 թ. սեպտեմբեր)», *Հայագիտության հարցեր* 1 (2014), 61-75; Tehmine Martoyan, “The Destruction of Smyrna in 1922: An Armenian and Greek Shared Tragedy,” *Genocide in the Ottoman Empire, Armenians, Assyrians, and Greeks, 1913-1923*, ed. George N. Shirinian (New York: Asia Minor and Pontos Hellenic Research Center, 2017), 227-249; Tehmine Martoyan, “Denying the Possibility of Annihilation during Genocide: A Case Study of the Armenians and Greeks, 1915-1922,” *New Perspectives on the Genocide of the Greeks in the Ottoman Empire, 1913-1923*, ed. George N. Shirinian (Chicago, IL: Asia Minor and Pontos Hellenic Research Center, 2019), 253-268.

դաքականությունը հանգում էր համընդհանուր թրքացմանը ոչ միայն էթնիկապես, այլև «պատմականորեն»⁸:

Չհավակնելով նկարագրել կատարվածի մանրամասները՝ այնուամենայնիվ հարկ ենք համարում որոշ փաստեր ներկայացնել, որոնք անհրաժեշտ են ընդհանուր պատկերացում կազմելու և մեր առաջադրած «ինչո՞ւ փրկել» և «ինչի՞ց» հարցերի պատասխանները դյուրացնելու համար:

Այսպես, Չմյուռնիայում ԱՄՆ հյուպատոս Ջորջ Հորթոնը հաղորդում է. «Եվրոպական մեծ ուժերի աչքի առջև և, ըստ երևույթին, նաև նրանց լուսկյաց համաձայնությամբ իրականացվող կոտորածը միակն է, որ հույս ունեմ այլևս երբեք չտեսնել: Հավատացած եմ՝ երբ հայտնի դառնա իրական ճշմարտությունն այն մասին, թե ինչ տեղի ունեցավ Չմյուռնիայում և թե ինչ էր տեղի ունենում Մերձավոր Արևելքում, Եվրոպայի և ԱՄՆ-ի բոլոր պարկեշտ մարդիկ կզգան այն, ինչ ես եմ զգում»⁹:

1922 թ. սեպտեմբերին կանադական «Տորոնտո դեյլի սթար» (“Toronto Daily Star”) թերթի խմբագրության հանձնարարությամբ՝ որպես թղթակից Չմյուռնիայում էր գտնվում նաև ամերիկացի գրող, լրագրող Էռնեստ Հեմինգուեյը: Չմյուռնիայի հայերի և հույների տառապանքները նրա վրա շատ ծանր տպավորություն են թողնում. այդ մասին է վկայում «Մեր ժամանակը» ժողովածուի «Չմյուռնիայի նավահանգստում» (1925 թ.) խորագրով պատմվածքը: «Տարօրինակն այն էր, ասում էր, թե ինչպես էին նրանք ամեն օր՝ կեսգիշերին, ճչում: Չգիտեմ, թե ինչու էին հենց այդ ժամին ճչում... Նրանց վրա էինք ուղղում լուսարձակները, որ խաղաղեցնեինք... Ամենասարսափելի վիճակում, ասում էր, մահացած երեխաներ ունեցող կանայք էին... Կյանքումս առաջին անգամ գիշերները մղձավանջներ էի տեսնում: Ծննդաբերող կանայք այդքան սարսափելի չէին, որքան մեռած երեխաներ ունեցողները: Նրանց հետ ավելի հեշտ էր: Չարմանալի էր, որ քչերն էին մեռնում: Նրանց ծածկում էին որևէ բանով և այդպես թողնում: Միշտ քաշվում էին նավամբարի ամենամույթ անկյունն ու երեխա բերում...»¹⁰:

Դանիացի միսիոներուհի Եսսինե Օրցը նկարագրում է. «Քրիստոնյաների հալածանքները հազիվ թե իրենց հավասարն ունենային պատմության մեջ: Դրանք ավարտվեցին Չմյուռնիայի տխրահռչակ աղետով: Աղոտ գաղափար կազմելու համար, թե ինչ տեղի ունեցավ, բավական է ընդամենը հիշատակել, որ քաղաքը կրակի մատնեցին... Ժողովրդի միակ ապավենը նավահանգիստն էր՝ ծածկված դիակներով և ծովի արյունաներկ ջրով»¹¹:

Չմյուռնիայի հայերն ու հույները, որքան էլ տարօրինակ թվա, համակվել էին այն համոզմամբ, թե իբր իրենց կյանքին վտանգ չի սպառնում, քանի որ գտնվում

8 Հակոբ Հակոբյան, *Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը* (Երևան, Ասողիկ, 2000), 114:

9 George Horton, *Report on Turkey: USA Consular Documents* (Athens: Journalists' Union of the Athens Daily Newspapers, 1985), 24.

10 Ernest Hemingway, *In Our Time* (New York: Scribner, 1930), 11-12.

11 Jensine Oerts Peters, *Tests and Triumphs of Armenians in Turkey and Macedonia* (USA: Zondervan, 1940), 48.

էին, ինչպես իրենք էին կարծում, օտարերկրյա ներկայացուցչությունների «հուսալի» հովանու ներքո:

Ճապոնական նավի հրամանատարի ու անձնակազմի շնորհիվ է նաև, որ այսօր, գրեթե հարյուր տարի անց, առավել մանրամասն տեղեկություն ունենք Չմյոտոնիայում կատարված ոճրագործության վերաբերյալ:

Նավը որպես հայ-ճապոնական հարաբերությունների խորհրդանիշ

Ամփոփ անդրադառնալով ճապոնացիների՝ Հայաստանի, հայերի և Հայոց ցեղասպանության վերաբերյալ տեղեկություններին՝ փաստենք, որ ճապոնացի իրավաբան, միջազգայնագետ Հիրոյոսի Սեգավան¹² «Հայերի մոռացված ցեղասպանությունը» աշխատության մեջ նշում է, որ իր երկրում հայերի մասին նյութեր գրեթե չկան, և հետևաբար ճապոնացիները հայերի նկատմամբ հետաքրքրություն չեն ցուցաբերում, իսկ Յեղասպանության կոնվենցիան լիովին չեն ընկալում¹³: Սեգավայի հաղորդած տեղեկությունները 2000-ականների սկզբի վերաբերյալ են: Այսօր հայ-ճապոնական հարաբերությունները, ամենատարբեր ոլորտներում փոխգործակցությունը կայուն և հեռանկարային են:

Յեղասպանությունը վերապրած ժողովրդի յուրաքանչյուր մասնիկ մարդասիրության նմանօրինակ քայլերի հանդեպ խիստ զգայուն է, իսկ անթաքույց համակրանքն ու երախտիքի զգացումը դեպի այս երկիրն ու ժողովուրդը՝ բնական: Սկզբից ևեթ նշենք, որ ճապոնացի նավապետի վարմունքը հավերժական երախտագիտության և երկու ժողովուրդների միջև անխախտ բարեկամության առիթ դարձավ:

Փրկության խորհուրդը

Հետազոտության թեմայի այժմեականությունը պայմանավորված է ճապոնական նավի ցույց տված փրկության «ինքնատիպությամբ» և կարևորությամբ:

Չթերագնահատելով Չմյոտոնիայի ափին խարիսխ գցած օտարերկրյա նավերի

12 Հիրոյոսի Սեգավան պատմում է, թե ինչու և ի՞նչ պայմաններում է ուսումնասիրել Հայոց ցեղասպանության թեման. «... Դոկտորանտուրան ավարտելուց հետո երկար ժամանակ իմ հետաքրքրության կենտրոնում եղել է «Յեղասպանության նախապայմանները» թեման: Այս հետազոտություններն իրենց նպատակին հասցնելու համար ինձ անհրաժեշտ էր կոնկրետ փաստեր բերել: Դա մոտ 20 տարի առաջ էր: Այդ ժամանակ ՄԱԿ-ի արխիվներում ուսումնասիրում էի ցեղասպանությունների հետ կապված նյութեր և հանկարծ հանդիպեցի «1915 թ. հայերի ցեղասպանությունը» վերնագրով մի նյութի... մարդկության հանդեպ պատասխանատվության զգացումով դրդված, որոշեցի ինձ վրա վերցնել հայերի ապրած ողբերգության մասին անտեղյակ ճապոնացիների այքերը բացելու պարտականությունը... շատ երկար և ոչ հարթ ճանապարհ էր...», մանրամասն տե՛ս *Հայաստան-Ճապոնիա: Քաղաքական, տնտեսական, մշակութային և գիտական հարաբերություններ*, խմբ. Միկոյան Հովհաննիսյան (Երևան, Զանգակ-97, 2005), 156-162:

13 Հիրոյոսի Սեգավան, *Հայերի մոռացված ցեղասպանությունը: Հետազոտություն ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու վերաբերյալ* (Երևան, Շշանակ, 2005), 51:

մարդասիրությունը, որոնք վերապրածների փրկության գործն են իրականացրել, նշենք, որ հետագոտել ենք բացառապես ճապոնական նավի օրինակը՝ փորձելով առկա սկզբնաղբյուրային գրականության հենքի վրա (հայերեն և օտարալեզու) պատմական փաստերի համադրմամբ ստանալ փրկության գործընթացի իրական պատկերը, շարժառիթներն ու հետևանքները՝ հիմնականում ականատեսների, վերապրողների հուշերի և վկայությունների հիման վրա:

Ոճրագործը ցեղասպանական ծրագիրը մշակելիս և իրականացնելիս, որպես կանոն, նկատի է առնում հնարավոր փրկողների փաստը և հետևաբար, «գործն անարգել ավարտին հասցնելու նպատակով», կանխարգելող միջոցներ է ձեռնարկում. «թիրախային խմբից» որևէ մեկին թաքցնելու և օգնություն ցուցաբերելու դեպքերը բացառելու կամ սահմանափակելու համար Օսմանյան պետության մեջ սոցիալական տարբեր շերտերի նկատմամբ նույնիսկ պատիժներ են սահմանվել¹⁴:

Անդրադառնալով օտարերկրյա ականատեսների «արձագանքին»՝ պարզենք, թե ինչն էր պայմանավորված նրանց վարքագիծը, ինչպես կարող ենք որակել այն՝ անտարբերություն, թե՛ «քաղաքական նախասիրություն»: Մեզ հուզող հարցերի պատասխանները փնտրենք ականատեսների վկայություններում:

Այսպես, գնյունիաբնակ բժիշկ, ականատես-վերապրող Կարապետ Խաչերյանի օրագրային գրառման մեջ կարդում ենք. «... Լուսանկարիչներն ու նրանց գերերջանիկ ընկերները մեր տանջանքների պարզ հանդիսատեսներն են: Նրանք մերժում են ապաստան տալ նույնիսկ լողալով կամ մակույկներով իրենց մոտեցողներին, որպեսզի պահպանած լինեն իրենց քաղաքական չեզոքությունը: Քաղաքակրթությունը, մարդասիրությունն ու քրիստոնեությունը սին բառեր են դարձել նրանց համար ...»¹⁵:

Մարդասիրական առաքելությամբ Արևելք ժամանած միսիոներներին արտոնված էր չմիջամտել. «... Մեր պատշգամբից տեսնում էինք հազարավոր մարդկանց (շուրջ 80.000), որոնք օրուգիշեր անցկացնում էին բաց երկնքի տակ՝ սպասելով նավերի: Նրանք մեր օգնության կարիքն ունեին, մինչդեռ մենք ոչինչ անել չկարողացանք... Հնարավոր բոլոր նավակներն օգտագործվեցին՝ տեղափոխելու այն հույներին ու հայերին, որ երջանիկ պատահականությամբ էին փրկվել... Այս խառնաշփոթության մեջ անմոռանալի պատկերների ականատեսը դարձանք ...»¹⁶:

Քչերն էին, որ սեփական կյանքը վտանգելու հստակ գիտակցմամբ խիզախություն ունեցան միջամտելու այդ ոճրագործությանը: Մարդատյացությանը նրանք հակադրվում էին մարդասիրությամբ. նրանց նպատակը մեկն էր՝ փրկել մարդուն անխուսափելի մահից: Քաջասիրտներն էին, որ չէին մտածում՝ ինչ կարող է պատահել իրենց հետ, կամ ինչն է մյուսները չեն օգնում: Մարդատյացությանը նրանք հակադրվում էին մարդասիրությամբ:

14 Գրիգորյան, *Ջանգվածները և զանգվածային բռնությունները*, 176:

15 Դորա Սաքայան, *Ջնյունիա 1922. բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը* (Երևան, Նահապետ, 2005), 78:

16 Peters, *Tests and Triumphs*, 48-49:

Ճապոնական նավի ժամանումը Զմյուռնիա

Ճապոնական նավի՝ Զմյուռնիա ժամանելու ամիսը սեպտեմբերն է, օրվա հետ կապված տեղեկությունները տարբեր են և հաճախ իրարամերժ: Մասնագիտական գրականության մեջ ամենաշատ շրջանառվող տարբերակը սեպտեմբերի 14-ն է:

Զմյուռնիայի միջազգային քոլեջի ամերիկացի պրոֆեսոր Բիրգի (Birge) կինը՝ Աննա Հարլոու-Բիրգը (Anna Harlowe Birge), վկայում է. «Այդ ժամանակ նավամատույցում կանգնած էր նաև ճապոնական մի բեռնատար նավ, որ հենց նոր էր ժամանել՝ բեռնված շատ արժեքավոր մետաքսով, ժանյակով և ճենապակով, որ հազարավոր դուլարներ արժեին: Երբ ճապոնացի կապիտանը տեսնում է իրավիճակը, առանց վարանելու ամբողջ բեռը լցնում է նավամատույցի կեղտոտ ջրերի մեջ, փոխարենը նավ նստեցնում մի քանի հարյուր գաղթականի, որոնց տանում է Պիրեա և ապահով իջեցնում հունական ափ»¹⁷:

Հունական «Էմբրոս» թերթը 1922 թ. սեպտեմբերի 4-ի (17) համարում անդրադարձ է կատարում ճապոնական նավի հրամանատարի խիզախ արարքին. «...Նրան հաջողվեց փրկել [մեր] 825 հույն գաղթականի՝ անտեսելով թուրքերի սպառնալիքները: Սարսափազդու կոտորածներից տպավորությունները և [հույն] գաղթականների խնդրանքները ճապոնացի հրամանատարին ստիպեցին, որ բեռնաթափի նավն ու հնարավորինս շատ գաղթականների տեղավորի: Քեմալի ռազմական ուժերի սպաները, շրջապատելով նավը, սպառնում են խորտակել այն: Ճապոնացի հրամանատարը քեմալական սպաներին անմիջապես հայտնում է, որ *գաղթականների մազին դիպչելու պարագայում անգամ արտաքը կդիտարկի որպես անարգանք Ճապոնիայի դրոշի հանդեպ և սպառնալիք Ճապոնիայի կառավարությանը* (ընդգծումը մերն է՝ Ա. Վ., Թ. Մ.), և որ ինքն անհապաղ կպահանջի [քեմալական կառավարությունից] ներողություն խնդրել: Ատերեսվելով այդ սպառնալիքներին՝ քեմալականները տեղեկացնում են իրենց վերադասին և պարտավորվում չանհանգստացնել ճապոնական նավի գաղթականներին»¹⁸:

Հետաքրքիր է նկատել, որ «Էմբրոս» թերթում նշված 825 հույն գաղթականի վերաբերյալ տեղեկության մեջ չի նշվում հայերի մասին: Ենթադրում ենք, որ հոդվածագիրը կամ հստակ տեղեկություն չի ունեցել հայերի թվական տվյալների վերաբերյալ, կամ միակողմանի է ներկայացրել:

«Նյու Յորք թայմս»-ի 1922 թ. սեպտեմբերի 18-ի համարում տեղ է գտել հետևյալ հաղորդումը. «... Հինգշաբթի օրը (սեպտեմբերի 14-ին) Զմյուռնիայում կար 6 շոգենավ՝ մեկ ամերիկյան, մեկ ճապոնական, երկու ֆրանսիական ու երկու իտալական: Ամերիկյան ու ճապոնական շոգենավերն ընդունում էին բոլոր եկողներին առանց

17 “Japanese at Smyrna,” *Boston Globe* (Boston), 3 December 1922, հղումն ըստ՝ Stavros Stavridis, “Special to the National Herald,” at http://www.greece.org/main/index.php?option=com_content&id=59&Itemid=82, դիտվել է 06.10.2020:

18 “Το Σφαγείον της Σμύρνης,” *Εμπρός*, 4 Σεπτεμβρίου, 1922, հղումն ըստ՝ Nanako Murata-Sawayanagi, “The Memory in a Crisis: A Japanese Ship Helping Out Greek Refugees on the Quay of Smyrna in 1922,” at <https://hermes-ir.lib.hit-u.ac.jp/hermes/ir/re/28545/?lang=1>, դիտվել է 06.10.2020:

‘նրանց թողթերը ստուգելու, մինչդեռ մյուսները՝ միայն օտարերկրացիներին՝ ստուգելով անձնագրերը»¹⁹:

Ամերիկահայ պատմաբան Մարջորի Հուսեփյան-Դորկինն այս առնչությամբ գրում է. «Հինգշաբթի առավոտյան «Սիմփսոն» (“Simpson”) ամերիկյան նավի հայտնվելը հուզմունքի մեծ ալիք բարձրացրեց, սակայն սկզբնական ուրախությունը փոխարինվեց վշտի, երբ լուր տարածվեց, որ միայն Ամերիկայի քաղաքացիներին է տանելու: Ավելի ուշ՝ նույն օրը (սեպտեմբեր 14), մի ճապոնական նավ է ժամանում: Ուղևորները հիացած էին նավապետի և անձնակազմի բացառիկ բարությանը. նրանք բեռը նետել էին՝ տարազիրների համար հարմար պայմաններ ստեղծելու նպատակով...»²⁰:

Տոկեի Մարու. ճապոնական նավի անվան բացահայտումը

Զմյուռնիայի հայերի ու հույների փրկության խարսխի՝ ճապոնական նավի մասին մասնագիտական գրականության մեջ առավել հաճախ խոսվում է առանց անվան հիշատակության:

Նախնական տպավորությունն այնպիսին է, որ նավն անուն չի էլ ունեցել, հետևաբար, «ճապոնական նավ» բառակապակցությունը, կատարված արարքին համարժեք հնչեղություն ստանալով, հավասարազոր է դարձել և նույնացվել «փրկություն» բառեզրի հետ: Շեշտը դրվել է ոչ թե անվան, այլ այն փաստի վրա, որ նավը ներկայացնում է ճապոնիան:

Հետազոտվող խնդրով զբաղվող հույն պատմաբան Ստավրոս Թերրի Ստավրիդիսը, Հունաստանի նորագույն պատմության մասնագետ, ճապոնացի Նանակո Մուրատա-Սավայանագին և տնտեսագետ, ճապոնագետ Աննա Վարդանյանն իրենց արժանի ներդրումն ունեն ճապոնական նավի պատմության ուսումնասիրության մեջ:

Ստավրիդիսը երկար տարիներ հետազոտում է հույն-թուրքական պատերազմի, հույների և հայերի բռնի տեղահանման, ցեղասպանության, ինչպես նաև Հայկական հարցի²¹ հիմնախնդիրը: Ունի բազմաթիվ հոդվածներ՝ նվիրված Զմյուռնիայի «Մեծ հրդեհին»: Նա մանրակրկտորեն ուսումնասիրել է նաև ճապոնական նավի թեման (հետաքրքիր է նկատել, որ Ստավրիդիսը բացահայտել է նավի անունը՝ *Տոկեի Մարու*

19 “Smyrna’s Ravagers Fired on Americans,” *New York Times* (New York), 18 September 1922, at <https://www.nytimes.com/1922/09/18/archives/smyrnas-ravagers-fired-on-americans-ymca-workers-were-held-up-and.html>, դիտվել է 06.10.2020:

20 Marjorie Housepian Dobkin, *Smyrna 1922: the Destruction of a City* (New York, Newmark, 1998), 174. Սիմփսոնի մասին տե՛ս նաև *American Accounts Documenting the Destruction of Smyrna by the Kemalist Turkish Forces, September 1922*, ed. by Constantine G. Hatzidimitriou (New York: Melissa International, 2005), 67.

21 Terry Stavridis, *The Armenian Question 1918-1920*, https://www.researchgate.net/publication/279556219_The_Armenian_Question_1918-20, դիտվել է 06.10.2020:

(東慶丸)²², որը հրապարակված է եղել ժամանակի հունական մամուլում)²³:

Ճապոնական նավն ու նրա հրամանատարը վերապրողների և ժամանակակիցների հուշերում

Ստորև ներկայացնում ենք ճապոնական նավով հունական ափ հասած ականատես-վերապրողների և նրանց ժառանգների մի քանի վկայություն:

Ալիս Թորյանը պատմում է օտարերկրացի անտարբեր դիտորդներին հղած օգնության կոչերի հուսահատ փորձերի մասին. «Յանուն մարդասիրության, յանուն ձեր ազգային արժանապատուության, յանուն ձեր պաշտելի Քրիստոսի վարդապետության, ազատեցե՛ք քրիստոնեայ անպարտ ազգի մը սա մնացեալները խաչելութենէ: Փրկեցե՛ք սա կիսամեռ ժողովուրդը հրկիզումէ... Բայց այդ նաւերուն ղեկավարները՝ անգութօրէն վտարել են զիրենք. «Չենք կրնար օգնել ձեզի... հրաման չունինք» պատրուակելով: Միայն ճաբոնական մարտանաւին ծովակալը ուզել է միջամտել. անիկա հեռախօսը բանալով քանի մը երրուպական մարտանաւերու պատասխանատուններուն՝ «Ասիկա մարդկային պատմութեան մէջ չլսուած ու չտեսնուած բարբարոսութիւն մըն է, 50-60 հազար քրիստոնեայ մանուկներ, կիներ եւ ծերեր ողջ-ողջ վառել տալ եւ ականատես ըլլալ ու լռել այսպիսի արտակարգ ոճիրի մը»²⁴: Յետոյ երբ միեւնոյն պատասխանը ստացել է իրենցմէ, ձեռքերը դէպի վեր բացել եւ գոչել է. «Փա՛նք, հազար փառք իմ Աստծոյն, որ զիս քրիստոնեայ չէ ծնած ձեզի պէս»²⁵:

Դան Յորդակասի մայրը վերապրող է, և հունական ափ է հասել ճապոնական նավով. «Իմ մայրը՝ Սոֆյա Պուսուկասը, և նրա միակ եղբայր Յորդոսը փրկվել են ճապոնական նավի շտրիփով: Նա մոտավորապես տասնմեկ տարեկան է եղել, իսկ եղբայրը՝ երկու... Մանրամասներ չի պատմում՝ բացի նրանից, թե ինչպես են

22 Ճապոնական առևտրանավերի անվանումների հետ հաճախ է կիրառվել հին ճապոներեն «մարու» («丸») բաղադրիչը, որ թարգմանաբար նշանակում է «շրջան»: Հարկ է նկատել այն հանգամանքը, որ Ճապոնիայում նավերը կոչվել են «լողացող դղյակներ» և, հետևաբար, այն նավերը, որոնց անվան մեջ առկա է եղել «մարու» (շրջան) բաղադրիչը, պաշտպանական գործառույթ են իրականացրել: Այս առնչությամբ տեղին է հիշատակել ավանդազրույցը, համաձայն որի Հակոուդո Մարուն է մարդկանց նավ պատրաստել սովորեցրել, իսկ «շրջանի» խորհրդանիշն ու գործածությունը բացատրվում է այսպես. «մարու»-ն հույս է ներշնչում, որ նավը, հեռանալով նավահանգստից և շրջելով աշխարհով մեկ, հայրենի ափ է վերադառնալու: «Տոկեի մարու» բառակապակցության «丸» բաղադրիչը թարգմանաբար նշանակում է «արևելք»: Հետաքրքրական է այն փաստը, որ ճապոնական նավերը պատահական անվանումներ չեն ստացել, և Տոկեի Մարուն, ինչպես երևաց վերը շարադրվածից, իր անվանը հավատարիմ՝ 825 վերապրող տարագրի փրկելով, ապահով տեղ հասցնելով և ապա վերադառնալով հայրենի նավահանգիստ, իրավամբ կատարել է իր կոչումն ու առաքելությունը, մանրամասն տե՛ս՝ <https://www.newyorker.com/magazine/1936/08/29/never-shall-be-slaves>, դիտվել է 12.10.2020:

23 Terry Stawridis, “Japanese at Smyrna: September 1922,” AHIF Policy Journal 7 (2016), 1-5.

24 Ալիս Թորեան, *Մանկությունս ստանց գարունի (անխաստեսի վկայություններ Իզմիրի սղէտէն)* (Պէլրոթ, Ատլաս, 1975), 75:

25 Նույն տեղում:

ելրոպացիները լքել իրենց: Նա մտածում է, որ ճապոնացին նման է Ջինի, սակայն ավելի բարի է: Իրենք բրինձ են կերել և հասել Աթենք... »²⁶:

Բյուզանդ Ջամբազյանը 1909 թ. Ադանայի կոտորածի ժամանակ եղել է ընդամենը վեց տարեկան, իսկ պատանեկության տարիներին դարձել քրիստոնյաների նկատմամբ երիտթուրքական վարչակարգի ցեղասպան քաղաքականության ականատեսը. «Ես ծովեզերք հասայ... Փողոց մը մտայ, ինչ տեսնեմ: Սպանդանոց էր: Մարդկային դիակներ ամէն կողմ՝ մորթուած, զարնուած, խոշտանգուած... Այս բոլոր ահ ու դողին մէջ. կառքերուն ձիերն անգամ խելագարած էին, որոնք իրենց փոկերէն ազատված կը վազէին դէպի ծով: Ծովը մարդկային դիակներով էր լեցուած, մանաւանդ կանացի դիակներով... Երբ հրդեհը նաւահանգիստ մօտեցեր էր, նաւերը հեռացեր էին ծովուն բացերը: Լողալով իրենց մօտեցողներուն վրայ տաք ջուր կը նետէին: Առաջին նաւը, որ ժողովուրդ առաւ, ճափոնական նաւ մըն էր: Իսկ դաշնակից ծովային զինուորներ պահակ կը պտտէին: Անոնց աչքերուն առջեւ տեղի կ'ունենար այս ահաւոր ողբերգութիւնը: Թուրք զինուորը արագահարուածով հազարաւոր զոհեր կը խլէր»²⁷:

Ճապոնական Տոկէի Մարու նավով փրկվածների թվում եղել է նաև աշխարհահռչակ երգեհոնահար *Պերճ Ժամկոչյանի*²⁸ հայրը՝ Նազարեթ Ժամկոչյանը²⁹: Սույն փաստի մասին հիշատակում է նաև Արծվի Բախչինյանը³⁰, ում հետ մասնավոր զրույցների ժամանակ տեղեկացել ենք նաև, որ Պերճ Ժամկոչյանն այս իրողության մասին առիթ է ունեցել բանավոր խոսքում, զրույցներում պատմել Հայաստան այցերի ժամանակ: Թերևս դա էր պատճառը փորձելու հարցի վերաբերյալ փնտրել փաստացի վկայություն, ինչն էլ հայ-ճապոնական կապերի հետազոտող Աննա Վարդանյանին տարավ Ճապոնիայի Կիոտո քաղաքի արվարձանում գտնվող «Միհո» թանգարան³¹:

Նախատեսված երաժշտական կատարումից առաջ Ժամկոչյանն անակնկալ ելույթ է ունեցել ներկաների առջև և պատմել իր ընտանիքի հուզիչ պատմությունն

26 Constantine G. Hatzidimitriou, “The Genocide of Anatolian Christians and the Destruction of Smyrna: Scholarship and the Evidence, Ninety Years Later,” at <https://hellenicresearchcenter.org/education/lectures-2/destruction-of-smyrna/>, դիտվել է 06.10.2020:

27 Բիւզանդ Ճամբազեան, *Պատանի կեանքի մը պատմութիւնը* (Լիբանան, Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկոյ, 1960), 48:

28 Պերճ Ժամկոչյան, Մշակույթի, արվեստի և մեդիա գործիչների հանրագիտարան, https://avproduction.am/?In=am&page=person&id=4091&name=%D5%8A%D5%A5%D6%80%D5%B3_%D4%BA%D5%A1%D5%B4%D5%AF%D5%B8%D5%B9%D5%B5%D5%A1%D5%B6, դիտվել է 09.09.2020:

29 Մասուո Նիշիբայաշի, «Հիշատակարաններ Հայաստանից», *Կատմամիգրասիկի կայինու* (հոկտեմբեր, 2004), 14 (ճապոներեն):

30 Արծվի Բախչինյան, *Հայ-ճապոնական պատմական և մշակութային առնչությունները* (Երևան, հեղինակային հրատարակություն, 2018), 61:

31 Ժամկոչյանը թանգարանի հիմնադրի հետ ունեցել է ընկերական, ջերմ հարաբերություններ: Թանգարանի հիմնադրման 10-ամյակին նվիրված միջոցառման համար ձեռք է բերվել այդ ժամանակների լավագույն, աշխարհում մեծությամբ և տեխնիկական զինվածությամբ զերիզոր երգեհոն, որի առաջին փորձարկումը վստահվել է Պերճ Ժամկոչյանին: Տոնակատարությանը ներկա էին Ճապոնիայի բարձրաստիճան պաշտոնյաներ և կայսերական ընտանիքի անդամներ, <http://www.miho.or.jp/>, դիտվել է 09.09.2020:

ու խոնարհաբար շնորհակալություն հայտնել ճապոնացի ժողովրդին³²: Դիպլոմատի տեսաձայնագրությունը մեզ սիրով և հոժարակամորեն տրամադրել է թանգարանի տնօրենությունը: Տեսաձայնագրության մեջ հնչած վկայությունն ամբողջությամբ ներկայացնում ենք ստորև³³:

«Ծնվել եմ Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Անունս ամերիկյան չէ: Ես հայկական ծագում ունեմ: Հայաստանը 3.500 տարվա պատկառելի պատմություն ունեցող երկիր է: Մեր երկիրը գտնվում է Արարատ լեռան ստորոտին, և պատմաբաններն այն անվանում են «քաղաքակրթության օրրան»: Հայաստանի պատմության գիրքն այնքան գեղեցիկ ու փառապանծ էջեր է պարունակում, սակայն, դրա հետ մեկտեղ, դրանում տեղ են գտել շատ տխուր և ողբերգական էջեր: Երբ մարդիկ նետվում էին Բոսֆորի նեղուցի անհանգիստ ջրերի մեջ, այնտեղ նրանց էին սպասում ճապոնական նավերը: Ճապոնացիները եկել էին փրկելու օգնություն հայցող հազարավոր հայերի կյանքեր: Եվ այդ անհանգիստ ջրերի մեջ նետված անձանց մեջ կար մի երիտասարդ, ում անունը Նազարեթ Ժամկոչյան էր՝ հայրս: Ուստի այն հազարավոր մարդկանց անունից, ովքեր փրկվեցին ճապոնացիների բարության շնորհիվ, և Նազարեթ Ժամկոչյանի որդու անունից ես այստեղ եմ՝ երախտագիտությունս հայտնելու և ներկայացնելու հայ ժողովրդի այն հատվածը, ում հաջողվել է գոյատևել: Որպես այն հայ տղայի որդի, ում փրկել էր ճապոնական նավը, ես ասում եմ ձեզ՝ անկեղծորեն շնորհակալ եմ»³⁴:

Այսպիսի մի հետաքրքիր գրառում է կատարել ժամանակի աշխարհասփյուռ հայ հանդիսատեսին հայտնի քամանչահար *Ռուբեն Կարախանյանը*³⁵ (Քեմանչիստ Ռուբեն), որ, շրջելով աշխարհով մեկ, եղել է նաև Հեռավոր Արևելքում՝ Ճապոնիայում: Նրա գրառումներից պարզ է դառնում, որ այցելելով Ճապոնիա՝ հանդիպել է Դիանա Աբգարին³⁶:

32 2016 թ. հուլիսին Աթենքում հունական կազմակերպությունները պարզևատրել են Հունաստանում Ճապոնիայի դեսպան Մաստո Նիշիբայաշիին՝ իրենց երախտագիտությունը հայտնելով ճապոնացիներին մարդասիրական արարքի համար, մանրամասն տե՛ս՝ Վիգեն Բաբկենյան, «Յեղասպանության ժամանակ ճապոնացիներն օգնել են փրկվել հայերին և հույներին», <https://akunq.net/am/?cat=22>, դիտվել է 06.10.2020:

33 Ճապոնիա, Կիտո քաղաքի «Միհո» թանգարանի 10 ամյակին նվիրված տոնական միջոցառման տեսաձայնագրություն:

34 Մեզ հայտնի դարձավ նաև, որ Ժամկոչյանի ճապոնացի ընկեր, «Միհո» թանգարանի հիմնադրի որդին՝ Կեիչի Կոյաման հանկարծամահ է եղել տոնակատարությունից մեկ տարի անց: Թանգարանի աշխատակիցները փաստեցին, որ բոթը լսելուն պես Ժամկոչյանը շտապել է Ճապոնիա և ընկերոջ հիշատակի օրվան նվիրված միջոցառման ժամանակ մեկ ամբողջ օր անդադար երգեհոն է նվագել: «Միհո» թանգարանի հիմնադրի կենսագրությունը՝ <http://www.miho.or.jp/en/intro/founder/>, դիտվել է 06.10.2020:

35 2016 թ. հունիսի 20–21-ը Հայ-ռուսական համալսարանում (ՀՌՀ) կայացած ճապոնագիտական երկրորդ միջազգային գիտաժողովի մասնակիցների հողվածների ժողովածու, 2-րդ հատոր (Երևան, ՀՌՀ հրատարակչություն, 2017), 113:

36 Այս փաստը թերևս նորույթ է Դիանա Աբգարի կենսագրության մեջ: Նա առավել հայտնի է որպես Ճապոնիայում Հայաստանի առաջին հանրապետության պատվավոր հյուպատոս: Երբևէ չլինելով Հայաստանում՝ Աբգարը չի դադարել օգնել սեփական ժողովրդին: Հատկանշական է, որ Հայոց ցեղասպանության տարիներին իր անձնական միջոցներով և կապերով անշահախնդրորեն օգնության

Քամանչահար Ռուբեն Կարախանյանի հուշերը Դիանա Արզարի հետ հանդիպման մասին ամենևին անսպասելի չէին, սակայն մինչ այս հուշերն ընթերցելը որևէ հետազոտության մեջ չէինք հանդիպել վկայություններ առ այն, որ նրանք ծանոթ են եղել: Կարծում ենք, որ պատճառը տարեթիվն է: 1935 թվականին Արզարն արդեն պատկառելի տարիքում էր, կյանքի մայրամուտին նա ակտիվ չի եղել գրական, հասարակական, քաղաքական կյանքում: Ուստի ենթադրում ենք, որ այդ տարիներին ուղղակի չեն գրառվել հուշեր կամ գուցե դեռ չեն հայտնաբերվել: Զարմանալի է, որ ծանոթ լինելով հայտնի նավապետի հետ, որ բազմաթիվ հայերի կյանքեր է փրկել, մարդասիրական վեհ քայլ կատարել, Դիանա Արզարը գրառումներ կամ հիշատակումներ չի կատարել այդ առնչությամբ: Քանի որ վերոնշյալ հանդիպումը կայացել է Արզարի մահվանից երկու տարի առաջ, թերևս կարծում ենք՝ գուցե այդ է պատճառը, որ նա, փոքր ինչ վատառողջ լինելով, չի գրառվել գրառումներով: Սակայն մեկ այլ տեսանկյունից էլ՝ մեր հիշատակած հանդիպումը կայացել է Զմյուռնիայում կատարված ոճրագործությունից 13 տարի անց, և վստահ ենք, որ նրանք շատ ավելի վաղ են ճանաչել մեկմեկու:

Նշանավոր քամանչահարի հուշերն այս պատմությանն առավել վառ գույներ են տալիս: Պարզվում է, որ նա առիթ է ունեցել հանդիպելու հայ ազգի բարեկամ նավապետի հետ, և Դիանա Արզարի հրավերով իրենք միասին ճաշել են³⁷: Մինչ այս պահը չկար հստակ տեղեկություն, որ Արզարը ևս ճանաչել է նավապետին, այս մասին տեղեկացանք նաև Արզարի ծոռնուհու՝ Միմի Մալայանի³⁸ հետ մասնավոր գրույցի և հարցուպատասխանի ժամանակ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նրանք (Դիանա Արզարն ու նավապետը) քամանչահարի հետ ծանոթանալու առիթով ճաշել են, մեզ թույլ է տալիս ենթադրել, որ Արզարն ու նավապետն ունեցել են ջերմ հարաբերություններ: Այս հանգամանքը նոր լույս է սփռում և հորիզոններ բացում հայ և ճապոնացի ժողովուրդների համատեղ պատմության էջերում:

Ուսումնասիրության արդյունքում բացահայտվեց, որ Դիանա Արզարը փոքրիկ նյութ է գրել 1922 թվականի Զմյուռնիայի հայերի և հույների հետ կատարվածի մասին³⁹: Սակայն վստահաբար, այդ ժամանակ նա դեռ ծանոթ չի եղել նավապետի հետ: Կարող ենք ենթադրել և առաջ մղել այն թեզը, որ Արզարն այդ տարիներին, բնակվելով Յոկոհամա քաղաքում, ինչ-որ կերպ լսել է նավապետի խիզախ արարքի մասին, և հենց ինքն է փնտրել ու ծանոթացել նրա հետ:

Հարկ ենք համարում նշել նաև, որ քամանչահար Ռուբեն Կարախանյանի հուշերը նավապետի հետ հանդիպման մասին այս պահին միակն են: Զմյուռնիայում

ձեռք է մեկնել այն հայ գաղթականներին, որոնք տարբեր ճանապարհներով (մեծ մասամբ Սիբիրով) հասել էին Ճապոնիա: Մանրամասն տե՛ս Դիանա Աղաբեկ Արզար, *Կյանքը և գործունեությունը* (Նոր Ջուղա, Սպահանի Հայոց թեմ, 2011):

37 Բախչիյան, *Հայ-ճապոնական պատմական և մշակութային առնչությունները*, 62-63:

38 Միմի Մալայանը Դիանա Արզարի ծոռնուհին է. նա գրառվում է մեծ տատիկի կյանքի և գործունեության ուսումնասիրությամբ, Արզարի ծննդյան 160 ամյակին նվիրված «Պետականագործի դիվանագետը» ֆիլմի պրոդյուսերն է, «The Stateless diplomat» կայքէջի հիմնադիրը:

39 Lucille Aparcar, *From the Book of One Thousand Tales: Stories of Armenia & Its People 1892-1922*, by Diana Agabeg Aparcar (USA, Bloomington: AutherHouse, 2004), 123-125.

կատարված ոճրագործությունից տարիներ անց չունենք այլ վկայություն, որ որևէ հայ կամ հույն հանդիպած լինի նավապետին: Մինչ օրս հույն և ճապոնացի պատմաբաններ, հետազոտողներ որևէ տեղեկություն չեն հաղորդել նավապետի մասին: Առկա են միայն հայ և հույն վերապրողների հուշագրությունները և հետևաբար, այս առումով ներքոշարադրյալ հուշերը բարձրարժեք են:

Ներկայացնում ենք քամանչահար Ռուբեն Կարախանյանի հուշերը⁴⁰:

Այս դիպվածային կապի վկայության շնորհիվ՝ մեզ հասանելի են դառնում նավապետի վերաբերյալ որոշ տեղեկություններ: Քամանչահար Ռուբենը նշել է, որ նավապետը շատ տպավորիչ արտաքին է ունեցել: Բացի այդ՝ այն հանգամանքը, որ Դիանա Աբգարը նավապետին ճապոնացի է ներկայացնում, ինքնին արդեն փաստում է, որ Նանակո Մուրատայի նախկինում առաջ քաշած թեզը, թե նավապետը գուցեև ազգությամբ ճապոնացի չի եղել, մերժվում է⁴¹: Հուշագրություններում և մամուլում նշվում են հետևյալ արտահայտությունները՝ ճապոնական նավ, ճապոնացի նավապետ, ճապոնացի քաջ նավապետ են: Սակայն երբևէ չենք հանդիպել, որ նավապետին ներկայացնեն որպես մեկ այլ ազգի ներկայացուցիչ: ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Ն. Գ. Ջուն Յամադայի հետ մասնավոր գրույցի ընթացքում հայտնի դարձավ, որ այդ տարիների ճապոնական նավի հրամանատար այլ ազգի ներկայացուցիչ չէր կարող լինել:

Նանակո Մուրատան մոտ տասը տարի ուսումնասիրել է Չմյուռնիայում կատարված ոճրագործությունը, եղել Չմյուռնիայում, Հունաստանում, հանդես եկել դասախոսություններով, հրատարակել հոդվածներ⁴², որտեղ սակայն բացակայում են հայերի

40 Յակոբ Մանուկեան, *Քեմանչիստ Ռուբենի յուշերը* (Պեյրութ, Հայ Տիպ Բունփիլյուրաֆ-Թեքնոփրես, 1989), 60-61:

41 Տե՛ս Նանակո Մուրատա-Սավայանագիի ելույթի տեսաձայնագրությունն Ամերիկայի հայկական ազգային կոմիտեի (Armenian National Committee America) միջոցառման ժամանակ, 2019 <https://www.facebook.com/watch/?v=955609138167717&extid=xs0S3jxaFS2gyER4>, դիտվել է 07.10.2020:

42 1990-ականների երկրորդ կեսին Հունաստանում մի պատմություն էի լսել ճապոնական նավի մասին, որն օգնել էր Չմյուռնիայի հույներին 1922-ի սեպտեմբերյան խորհրդակցական օրերին: Կարծում էի՝ անհիմն է, և ոչ մի պատճառ չէի տեսնում ճապոնացիների՝ Չմյուռնիայի նավահանգստում գտնվելու փաստի վերաբերյալ: Գիտեի նաև, որ Ճապոնիան հույն-թուրքական պատերազմի տարիներին հայտարարել էր իր չեզոքության մասին: Եթե ճապոնական նավն օգներ հույներին, ապա այն կդիտարկվեր որպես իրավախախտում: Մտածում էի՝ արդյո՞ք հնարավոր է: Ես միակը չէի, որ գիտեի այդ պատմության մասին: Ամեն դեպքում առաջին անգամ Եվգենիդիսի շարադրանքում հանդիպեցի ճապոնացիների՝ հույներին փրկելու մասին մի պատմության: Ինչ-ինչ պատճառներով այն ինձ «հետապնդում» էր, և ի վերջո մտածեցի, որ պատմության իսկությունը բացահայտելու համար գուցե արժե ուսումնասիրել այն: Մտքումս մի քանի հարց կար: Առաջին՝ եթե պատմությունը ճիշտ է, ինչո՞ւ էր ճապոնական նավը Չմյուռնիայում: Երկրորդ՝ արդյո՞ք հույներին փրկելը ճապոնացիների մարդասիրական զգացումներից էր բխում, թե՞ այլ պատճառներ կային: Երրորդ՝ ինչպե՞ս կարող էին ճապոնացիները հաջողությամբ հաղորդակցվել հույների հետ: Ի՞նչ լեզվով էին նրանք խոսում հույների և թուրքերի հետ իրենց մտադրությունը հասկանալի դարձնելու համար: Նրանց հետ անգլերե՞ս էին խոսում: Միգուցե անձնակազմում կային մարդիկ (հնարավոր է և ոչ ճապոնացիներ), որ հունարեն կամ թուրքերեն գիտեին: Ի թիվս այլ հարցերի՝ մտածում էի՝ արդյո՞ք հույները նախապես ինչ-որ բան գիտեին Ճապոնիայի և ճապոնացիների մասին: Թեպետ նրանք ապրում էին բազմազգ միջավայրում (հատկապես Չմյուռնիայի հույները լավ ճանաչում էին եվրոպացիներին և ամերիկացիներին, նրանց ապրելակերպը), այնուամենայնիվ նրանց մեծ մասի համար ճապոնացիները պետք է որ նման լինեին այլմոլորակայինների: Ինչպե՞ս հույներն ընդունեցին նրանց: Կարո՞ղ ենք ասել, որ նրանք այդ

մասին տեղեկությունները:

Հարկ ենք համարում նշել, որ միայն 2019 թվականից է Մուրատան իր ելույթներում անդրադառնում նաև հայկական կողմի ներկայությամբ⁴³:

Փաստենք, որ գտել և մեծ դժվարությամբ վերարտադրել ենք այդ օրերի հունական մամուլի հաղորդագրությունները ճապոնական նավի, քաջ նավապետ Լուի (Բյու) (ճապոներեն՝ 龍 կամ 竜)⁴⁴, հայ և հույն ժողովուրդների ցեղասպանության, Չմյուռնիայում տիրող աննկարագրելի իրավիճակի և փրկյալների մասին⁴⁵:

Հունաստանը՝ լայն բացված դարպասներով հյուրընկալ ապաստան

Քարերախտաբար, Չմյուռնիայի տասնյակ հազարավոր հայերի և հույների փրկության գործը հաջողությամբ է ավարտվում, թեև շատերն իրենց ապրելը մեղք ու դավաճանություն էին համարում: Տարագիր հայերի թիվն ամբողջ Հունաստանում, ըստ ամենատարբեր աղբյուրների, տատանվում էր 90.000-ից⁴⁶ մինչև 200.000⁴⁷. Նրանք հաստատվել էին Աթենքում, Լիբազմայում, Կոկինայում, Ալեքսանդրոպոլսում, Սալոնիկում և այլուր⁴⁸:

Ինչպիսին էր Հունաստանի՝ որպես հյուրընկալող պետության արձագանքը, կամ

օգնությունն ընդունեցին, որովհետև վտանգի մեջ էին: Չորրորդ՝ որպես ժամանակակից Հունաստանի պատմաբան ինձ ամենից շատ հետաքրքրում էր, թե ինչպե՞ս էին հույներն այս իրապատումը պահում իրենց հիշողության մեջ, ապա՝ փոխանցում ապագա սերունդներին: Եվ ընդհանրապես, ինչպե՞ս են ձևավորվում մարդկանց հիշողությունները ծայրաստիճան ճգնաժամային իրավիճակների մասին: Եվ հետո, ինչպե՞ս են նրանք տարիներ անց աղավաղված կերպով պատմում իրենց հիշողությունը, Nanako Murata-Sawayanagi, “The Memory in a Crisis: A Japanese Ship Helping Out Greek Refugees on the Quay of Smyrna in 1922,” at <https://hermes-ir.lib.hit-u.ac.jp/hermes/ir/re/28545/?lang=1>, դիտվել է 07.10.2020:

2018 թ. հույն անիմատոր Չախոս Սամուլադյալը ճապոնական նավի և նավապետի մասին ֆիլմ է նկարահանել, որը 2019 թ. լրամշակվել է՝ ներառելով հայ, հույն և ճապոնացի պատմաբանների հետազոտությունների արդյունքները, տե՛ս՝ <https://www.1tv.am/hy/video/%D4%B2%D5%A1%D6%81%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B5%D5%BF%D5%AB%D6%80-%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A8-%D5%93%D5%B8%D6%84%D6%80-%D5%A1%D5%A6%D5%A3%D5%AB-%D5%B4%D5%A5%D5%AE-%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B4%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/167631?fbclid=IwAR212EwtbDAcpsr8mBBEeqGISzKK271DaXFGSMsilNXohpYkUgmg0xMgaK1w>, դիտվել է 10.12.2020:

43 Նանակո Մուրատա-Սավայանագի, Ամերիկայի հայկական ազգային կոմիտե <https://www.facebook.com/watch/?v=955609138167717&extid=xs0S3jxaFS2gyER4>, դիտվել է 07.10.2020:

44 Տե՛ս՝ <https://myoji-yurai.net/searchResult.htm?myojiKanji=%E9%BE%8D>, <https://myoji-yurai.net/searchResult.htm?myojiKanji=%E7%AB%9C>, https://www.youtube.com/watch?fbclid=IwAR30cYxPLvHgTWvQ9WFCSLtjWXjuH-wk2WN1xpd-6jhccZnn_1ZEQTYosg&v=Yc-FGViiB1M&app=desktop, դիտվել է 10.10.2020:

45 “Το Σφαγείο της Σμύρνης”, *Εμπρός*, 4 Σεπτεμβρίου, 1922.

46 Լիպարիտ Ազատեան, *Հայ որբերը Մեծ եղեռնի*, հատոր 1-ին (Լոս Անճելըս, Ապրիլ, 1995), 103:

47 Աշոտ Արրահամյան, *Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության*, հ. Բ (Երևան, Հայպետհրատ, 1967), 105:

48 Նույն տեղում:

արդյոք հասարակության մեջ տարագիրների ներգրավման հստակ և համակարգված ծրագիր. «... Հունաստանը, որտեղ վաղուց ի վեր հայկական գաղութ կար, դարձավ լայն բացված դարպասներով հյուրընկալ ապաստան ահավոր սպանելից ճողոպրած բյուրավոր հայերի համար... Տասնյակ հազարավոր խուճապահար տարագիրներ, հասնելով Պիրեա, այնտեղից տարածվում էին դեպի Աթենք, Սալոնիկ ու դրանց շրջակայքի գաղթականական կայանները...»⁴⁹, – գրում է Հովիկ Մելիքսեթյանը:

Կոստանդնուպոլսում ԱՄԵ դեսպան Հենրի Մորգենթաուն անդրադառնում է վերոհիշյալ իրադարձություններին. «Երկու շաբաթվա ընթացքում 750.000 մարդ նախիրի նման թափվեց Սալոնիկի և Աթենքի նավահանգիստներ ու Էգեյան ծովի հունական կղզիներ՝ Կրետե, Միտիլինի, Քիոս և Էվբեա: Հունաստան ժամանելիս այս մարդկանց դրությունն աննկարագրելիորեն խղճալի էր... Երանց ուղևորությունը տեղի էր ունենում միմյանց հաջորդող այրող արևի և աշնանային սառը անձրևի տակ: Ես ինքս տեսել եմ մի նավ, որ, նախատեսված լինելով երկու հազար մարդու համար, բեռնված էր յոթ հազար հոգով: Այս և այլ դեպքերում ջուր կամ սնունդ չկար... Տարածվում էր տիֆն ու ծաղիկը, վխտում ոջիլը: Երեխասներ էին ծնվում տախտակամածի վրա: Տղամարդիկ և կանայք խելագարվում էին: Շատերը ծովն էին նետվում՝ վերջ դնելու իրենց դժբախտությանը...»⁵⁰:

Այս առնչությամբ բավականին հետաքրքիր են Ազգերի լիգայում փախստականների հարցերով և ռազմագերիների հայրենադարձության գծով գերագույն կոմիսար Ֆրիտյոֆ Նանսենի տպավորությունները. «Ես առաջ երբեք չէի իմացել, թե ինչ է նշանակում տեսնել մի ամբողջ ժողովրդի՝ ոտքի վրա. դա իսկական «Volkswanderung» (ժողովուրդների գաղթ) էր, ինչպես հին ժամանակներում: Մենք բարձրացանք մի բլրի գագաթը: Կարծեցի, թե իմ դիմաց տեսնում եմ մի ամբողջ քաղաք՝ իր հազարավոր լույսերով. նրանց ճամբարներն էին՝ սփռված դաշտով մեկ... Այդտեղ նրանք քնում էին գետնին առանց որևէ ծածկի... Չգիտեին, թե ուր են գնում և ինչ կգտնեն՝ օթևան, թե՛ թշվառություն»⁵¹:

Տարագիր հայերի և հույների բնակեցումը Հունաստանում թեև դժվարությամբ, սակայն իրականացավ: Տեղի հույները գրկաբաց ընդունեցին նրանց՝ որպես ազգային ընտանիքի լիիրավ անդամների: Երանք ստացան քաղաքացու բոլոր իրավունքներն առանց որևէ խտրության⁵²: Հասարակության մեջ տարագիրների ներգրավման ծրագիրը միանգամայն հստակ էր:

Հույների՝ հատկապես հայ տարագիրների նկատմամբ բարյացակամ վերաբերմունքի մասին է վկայում Ստոկհոլմի միջազգային հինգերորդ օլիմպիական խաղերի մասնակից Վահրամ Փափազյանը, որ իր կնոջ և որդու հետ 1922 թ. օգոստոսի վերջին

49 Հովիկ Մելիքսեթյան, *Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.)* (Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1985), 52:

50 Henry Morgenthau, *I was Sent to Athens*, in collaboration with French Strother (New York, Doubleday: Doran & Company, 1929), 47- 49.

51 Հղումն ըստ՝ Հակոբ Հակոբյան, նշվ. աշխ., 261:

52 Morgenthau, *I was Sent to Athens*, 104.

Չավեն պատրիարքի հրահանգով Կոստանդնուպոլսից մեկնում է Պիրեա, ապա՝ Կրետե. «Յոյն կառավարութեան եւ ժողովուրդին Հայերոս հանդէպ ցոյց տուած ասպնջականութիւնը եւ սերը գրիչով գրեթէ կարելի չէ նկարագրել: Հայերուն հետ միաժամանակ, Փոքր Ասիայէն, հարիւր հազարատը Յոյներ եկան եւ Յունաստանի գանազան շրջաններուն մէջ տեղաւորուեցան: Բնիկ ժողովուրդը, սակայն աւելի տաք վերաբերմունք մը ցոյց տուաւ Հայերոս հանդէպ, քան թէ իր հարազատ ներգաղթող հայրենակիցներուն... Պետութիւնը իւրաքանչիւր գաղթականի, անխտիր, դրամական կանոնաւոր յատկացումներ ըրաւ: Բաշխումի ընթացքին, վճարումը կ'ըլլար նախ՝ Հայերոս եւ յետոյ՝ յոյն գաղթականներուն... Յոյն բժիշկներ գրեթէ ձրի կը դարմանէին մեր հիւանդները եւ խանութպանները ապառիկ ուտեստեղէն, ապրանք կու տային իրենց բոլորովին անձանօթ հայ գաղթականին: Երբ գործաւորի պէտք կար, նախ Հայուն գործ կու տային շատ մը շրջաններու մէջ»⁵³:

Սալոնիկի բաց երկնքի տակ ապրող մարդկանց համար որպէս ժամանակավոր ապաստան տրամադրվեցին դպրոցներ, եկեղեցիներ, թատրոններ, բանակային ճամբարներ և պահեստներ: Տարագիրների համար բնակատեղի էին դարձել նաև Աթենքի մշակութային կենտրոնները, տաճարները, գորամասերը⁵⁴:

Զմյուռնիայի «տարագիրների բանակն» ապաստան գտավ մի պետության տարածքում, որը թեև պատերազմից տնտեսապես ու ֆինանսապես հյուծված էր, այնուամենայնիվ գրկաբաց ընդունեց նրանց: Զմյուռնիայի հայերի ու հույների վերաբնակեցումը Հունաստանում տեղի ունեցավ *հարկադրված տարագրության* հետևանքով: Տարագիր լինելը բոլոր ժամանակներում բավականին բարդ է եղել: Տարագրի ներաշխարհում իսկական քառս է տիրում: Դա լավ են պատկերացրել հին հույները, երբ հանցագործի համար առավել ստսկալի պատիժ սահմանել են տարագրությունը՝ գերադասելով սովորական մահապատժից: Հունաստանին՝ որպէս հյուրընկալ պետության, միջազգային ամենատարբեր կազմակերպություններին, անհատներին և հասարակ ժողովրդին միավորում էր մարդասիրությունը: Նրանց գործադրած ջանքերը մեծապես նպաստեցին, որ տարագիրները վերափմաստավորեն իրենց կյանքն ու վերստին գտնեն ապագայի հանդէպ կորցրած հավատը: Այդ փորձը կարելի է հաջողված համարել. դա է վկայում տարագիրների սերունդների խաղաղ ու ստեղծագործ գոյակցությունը⁵⁵:

53 Վահրամ Փափազյան, *Սէր, սէր, սէր* (Պեյրոյթ, Սևան, 1962), 135-136:

54 James L. Barton, *Story of Near East Relief (1915-1930)* (New York: the Macmillan Company, 1930), 162.

55 Զմյուռնիայի հայերը 1922 թ. տեղի քրիստոնեաբնակ հայերի և հույների բնաջնջումից ու քաղաքի հրկիզումից 95 տարի անց սուրբ նահատակների համար պատարագ են մատուցում ներկայիս Իզմիրում, տե՛ս՝ https://www.tert.am/am/news/2017/08/15/izmir/2457941?fbclid=IwAR3BXISIW0Nc32DHgqAWjot1HFXaz0I_vkh-uUB6BvaPIQ1ElutAN_X_kxk, դիտվել է 10.10.2020:

ՀԱՎԵԼՎԱԾ⁵⁶

Նաապետը

Տակաին ականջիս մէջ կը հնչէ ճաբոնցի նաապետին խօսքը:

— Եթէ քրիստոնէութիւնը սա է, ուրախ եմ քրիստոնէայ չըլլալու...:

Թոքիոյի Y.W.C.A.-ի ատենապետուին՝ Տիկին Աբգարը, մեր ամենամօտիկ եւ անբաժան ընկերուիին էր, երբ ճաբոն կը գտնուէինք. իրարու հետ եւ իրարմով կը լեցնէինք մեր առօրեան: Յաճախ իր կազմակերպութեամբ ելոյթներ կ'ունենայինք. քանիցս խրախուսեց մեզ Ամերիկա հաստատուելու համար: Օր մը ըսաւ:

— Ռուբէն, վաղը մեզի ճաշի էք. ձեզ նաապետի մը պիտի ներկայացնեմ. հետաքրքիր ծերունի մըն է, գոհ կ'ըլլաք:

Յաջորդ օրը, մեզ ներկայացուց ծերունագարդ ճաբոնցի նաապետի մը:

— Պարոն քարիթան, կը ներկայացնեմ ձեզի հայոց -Քեմանչիստը:

— Քեմանչիստ, կը ներկայացնեմ ձեզի հայոց (եւ քրիստոնէաներուն) ազատարարը, Իզմիրի աղէտի ընթացքին, մեր բարեկամ ճաբոնցի նաապետը:

Կը ձեռնուինք: Ազատարար... Իզմիրի աղէտ... ճաբոնցի քարիթան...:

Թարգմանաբար՝ հարցումներու տեղատարափով մը, կ'իմանամ քանի մը տողերու մէջ, համեստ, բայց իմաստալից պատմութեան մը ամփոփումը, թէ՛ 1922 թուականին, Իզմիրի վատ օրերուն, երբ քաղաքը իր ամբողջ շրջակայքով միասին, կողոպուտի, ատերի, սպանութեան, արեան եւ հրդեհի մէջ էր, քաղաքին հայ եւ քրիստոնէայ բնակչութիւնը, երեխաներով ու ծերունիներով, ճանապարհ կ'իյնայ դէպի ծովեզերք, հրդեհէն ու կոտորածէ ազատուելու համար: Ոմանք ճամբուն ընթացքին կացինահար կ'ըլլան, ուրիշներ՝ բախտաւորներ, ծով կը նետուին լողալով խարսխուած քրիստոնէայ նաւերուն մէջ ապաստան գտնելու յոյսով:

— Քարափէն քիչ մը հեռու, պատրաստ դիրքի, վրայ, հինգ ազգութիւններու պատկանող նաւեր կային, որոնք, կը խորհիմ ինծի նման սարսափահար ի տես այս ահաւոր սպանդին, օգնութեան ձեռք մը պիտի երկարէին փրկելու համար հայ եւ յոյն քրիստոնէայ խլեակները: Սակայն ցաւ ի սիրտ կը յայտարարեմ, որ անգլիական, իտալական եւ ամերիկեան նաւերուն պատասխանատուները, չուաններու միջոցաւ իրենց նաւերը մագլցողները ետ ծով նետեցին, նաւ հասնողներուն մատներուն վրայ կոխեցին, որպէսզի ծովը իյնային: Ֆրանսական նաւուն քարիթանը, քանի մը մակոյկներով, հաւաքեց ծովը թափուած զոհերէն մաս մը, եւ յանձն առի հաւաքել որքան որ կրնայի: Նոյնիսկ, կը յիշեմ, նաւուս բեռները ծովը նետեցի, որպէսզի ատելի օգտակար կարենայի ըլլալ այդ յուսահատ մարդկային էակներուն:

— Եթէ քրիստոնէութիւնը այս է, ուրախ եմ որ քրիստոնէայ չեմ..., — ըսաւ ճաբոնցի նաապետը:

56 Արժևորելով անհավանական թվացող հանդիպումը, փրկվողի և փրկողի երկխոսությունը՝ հարկ ենք համարում ներկայացնել ամբողջական նյութը՝ հարազատ մնալով բնագրային լեզվին:

Խիստ յուզիչ իրականություն մըն է սա պատահարը, որ միշտ ինքզինք կը կրկնէ բոլոր քրիստոնէայ ազգություններու պատմություններուն մէջ, հեռաւոր Արեւելքի, Ափրիկէի, Միջին Արեւելքի եւ նոյնիսկ այժմեական քաղաքական անցուդարձներուն ընթացքին: Սարսափած էի ճարոնցի նաւապետին ականատեսի այս վկայութենէն: Աւելի սարսափելի նոյնանման գոյավիճակներու մասին իմացած էի, տեսած ալ, սակայն այս մէկը գլուխ-գործոցն էր մարդկային բարբարոսություններուն:

Չափազանց յուզուած էի. չկրցայ խօսք մ'իսկ գտնել, այլ երկար սեղմեցի ճարոնցի նաւապետին ձեռքը, որպէս երախտագիտություն իր մարդկային կեցուածքին հանդէպ⁵⁷:

Anna A. Vardanyan
PhD in Economics
Tehmine R. Martoyan
PhD in History

TRACKING THE JAPANESE SHIP: THE RESCUE ROUTE OF SMYRNA'S ARMENIANS AND GREEKS

SUMMARY

Keywords: Armenian Genocide, Greek Genocide, exile, Japanese ship, captain, rescue, humanitarianism, Smyrna, Greece.

The purpose of the research is to comprehensively present the rescue process of the Armenians and Greeks exiled from Smyrna, tracking the example of a Japanese ship. To achieve the stated goal, the history of the Smyrna fire and the extermination of the Armenian and Greek populations of the local Christian districts have been studied, the details of the Japanese ship's arrival and the passage of the survivors to the Greek shores has been explored according to the verified data by eyewitness-survivors.

The relevance of the research topic is conditioned by the “originality” and importance of the rescue operation performed by the Japanese ship. Voicing out about such realities nowadays will contribute educating a righteous and unbiased society.

57 Մանուկեան, *Քեմանչիստ Ռուբէնի յուշերը*, 60-61:

Анна А. Варданян
кандидат экономических наук
Тегмине Р. Мартоян
кандидат исторических наук

ЗА ТРАЕКТОРИЕЙ ЯПОНСКОГО КОРАБЛЯ: ПУТЬ СПАСЕНИЯ АРМЯН И ГРЕКОВ СМИРНЫ

РЕЗЮМЕ

Ключевые слова: Геноцид армян, Геноцид греков, депортация, японский корабль, капитан, спасение, человечество, Смирна, Греция.

Целью исследования является полное представление процесса спасения депортированных армянских и греческих беженцев в Смирне на примере японского корабля. На фоне истории поджога Смирны, истребления армяно-греческого населения в местных христианских кварталах, раскрыты подробности прибытия японского корабля, спасения сотен выживших и их доставки к греческому берегу.

Актуальность темы исследования обусловлена «оригинальностью» и важностью спасательной операции японского корабля. Освещение таких реалий в наши дни может воспитать благочестивое и альтруистическое общество.

REFERENCES

Abrahamyan, Ashot. *Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության* [Brief Outline of the History of Armenian Colonies]. Yerevan: Haypethrat, 1967;

Azadian, Libarid. *Հայ որբերը Մեծ եղեռնի* [The Orphans of the Armenian Genocide]. Los Angeles: April, 1995;

Bakhch'inyan, Artsvi. *Հայ-ճապոնական պատմական և մշակութային առնչությունները* [Armenian-Japanese Historical and Cultural Connections]. Yerevan: Author's edition, 2018;

Grigoryan, Hasmik. *Չանգիվածները և Չանգիվածային բնությունները. Օսմանյան կայսրության մուսուլման բնակչության մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը* [The Masses and Mass Violence: Participation of Muslim Population of the Ottoman Empire in the Armenian Genocide]. Yerevan: Gitut'yun, 2017;

Hakobyan, Hakob. *Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը* [Idea of Returning to Homeland and Contemporary International Law]. Yerevan: Asoghik, 2000;

Manoukian, Hakob. *Քեմանչիստ Ռուբենի յուշերը* [Memories of Qemanch'ist Rouben]. Beirut: High Type Compugraph-Technopress S.A.L., 1989;

Martoyan, Tehmine. «Զմյուռնիայի հայ և հույն բնակչության բնաջնջման սպառնալիքի ժխտման հետևանքները (1922 թ. սեպտեմբեր)» [“The Consequences of the Denial of the Threat of Extermination in Case of the Greek and the Armenian Population of Smyrna (September 1922)”], *Hayagitutyan harcer* no. 1 (2014): 61-75;

Marut'yan, Harut'yun. «Թուրքերի կողմից հայերի փրկության խնդիրը Ցեղասպանության տարիներին Հոլոքոստի ուսումնասիրության լույսի ներքո», *Հայոց ցեղասպանություն-100. Ճանաչումից՝ հասնուցում, Միջազգային գիտաժողովի զեկուցումների դրույթներ* [“The Question of Rescuing Armenians During the Genocide in the Light of the Holocaust Researches,” in *Armenian Genocide-100. Collection of Papers of the International Conference*]. Yerevan: Gitut'yun, 2016, 218-221;

Marut'yan, Harut'yun. «Հայոց ցեղասպանության և Հրեաների հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները» [“Structural Peculiarities of Armenian Genocide and Jewish Holocaust Memory”]. *Patmabanasirakan handes* 2 no. 187(2011): 24-46;

Marut'yan, Harut'yun. «Հայոց ցեղասպանության տարիներին հայերի իրական և կեղծ փրկության խնդիր շուրջ» [“On the Issue of the True and False Rescue of Armenians during the Armenian Genocide”]. *Lraber hasarakakan gitutyunneri* no. 2 (2018): 30-60;

Meliqsetyan, Hovik. *Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.)* [Homeland-Diaspora Relations and Repatriation]. Yerevan: Yerevan University, 1985;

Papazyan, Vahram. *Սէր, սէր, սէր* [Love, Love, Love]. Beirut: Sevan, 1962;

Sakayan, Dora. *Զննությունիս 1922: Բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը* [Smyrna 1922, Armenian Doctor Garabed Hatcherian's Diary]. Yerevan: Nahapet, 2005;

Segava, Hir'oyosi. *Հայերի մոռացված ցեղասպանությունը* [Forgotten Genocide of the Armenians]. Yerevan: Nshanak, 2005;

Torean, Alis. *Մանկությունս առանց գարունի (սկանաստեպի վկայություններ Իզմիրի աղէտէն)* [My Childhood without Spring (Eye-witness Testimonies from Izmir Catastrophe)]. Beirut: Atlas, 1975;

Հայաստան-Ճապոնիա, քաղաքական, տնտեսական, մշակութային և գիտական հարաբերություններ [Armenia-Japan, Political, Economic, Cultural and Scientific Relations]. Yerevan: Zangak, 2005.



Հասյունական նավը Զմյուռնիայի նավահանգստում



Զմյուռնիայի տարագիրները



Թաղամաս Զմյուռնիայում



Զմյուռնիայի ծովախորշը



Զմյուռնիայի նավահանգիստը